Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 806 ՀԻՆԳՇԱԲԹԻ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1886 (Ն. Տ.) 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1886 25 ԶԻԼՀԻՃՃԻ 1303

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆԵՆ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳԻՐ
Գալաթիա, Նորատունկեան-խան

غلطه نورادونكيان خانده اداره سينه

غزته‌سی اداره‌سی

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ԳԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արծաթի	200
» »	Վեցամսեայ	» »	100
» »	Չորսամսեայ	» »	50
Գաւառաց »	եւ տեղական թղթատարով	տարեկան » »	240
Գաւառաց համար	եւ տեղական թղթատարով	վեցամսեայ » »	120
Օտար երկիրներ,	տարեկան	ֆրանկ	56
» »	վեցամսեայ	»	28

Դուրս գրկուած թղթաց համար ծանրս. ծախքը Տնօրէնութեան վրայ է։ Խմբագրութեան գրկուած նամակ կամ գրութիւն եւ չարուիր։

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1886

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՊԱՏԱԿ ԱԶԳՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

Ռուսիա զիւր ազդեցութիւն կունայ վերահաստատել Պուլկարաց վրայ կամ ո՞չ. բայց ասկէ չի հետեւիր բնաւ թէ Օսմ. Տէրութեան հպատակ ուրիշ քրիստոնեայ ազգութիւնք աւելի կամ նուազ կրեն ռուսական ազդեցութիւն։ Պուլկարք, Յոյնք և Հայք բոլորովին տարբեր դիրքեր ունին Ռուսիոյ նկատմամբ։ Շատ հաւանական է որ Ռուսիա բոլորովին իւր ազդեցութեան տակ առնու Պուլկարները։ Ո՞չ ապաքէն Ալէքսանդր Իշխանն ինք՝ իւր վերջին հեռագրով առ Զարն՝ կը ճանչէր թէ Ռուսիա իրաւունք ունի բացառապէս ազդեցութիւն ի գործ դնելու պուլկար ազգին վրայ։ Պուլկարական ազգայնութեան և ինքնօրէնութեան այդ աբի ջատագովը կը խոստովանէր թէ Պուլկարիա իւր ազատագրութիւն Ռուսիոյ կը պարտի. թէ ինք ևս իւր թագը Զարին ձեռքէն ընդունած է. թէ Պուլկարիա կարօտ է Ռուսիոյ հովանաւորութեան, և թէ ինք պարտականութիւն պիտի համարի Զարին կանց համեմատ կառավարել պուլկար ժողովուրդն։ Ալէքսանդր Իշխանին այս յայտարարութիւնք կրնան աւելի կամ նուազ անճիշդ լինել իբրեւ իրողութիւն. բայց ո՞չ ապաքէն, երբ այնքան անկախ ոգի կրող Իշխան մ՝ իսկ կ՝ընէ այսպիսի խոստովանութիւններ, ռուսական ազդեցութեան վերահաստատման մեծ հաւանականութիւն մը կ՝երեւի։ Այս հաւանականութիւնն ապաքէն ստուգութիւն մ՝է այսօր յայտ ռուսական, դերմանական, աւստրական և անգլիական կարեւորագոյն լրագրաց։ Սոպրանիէն, Ալէքսանդր Իշխանին անունը կեցցէներով յիշատակելուն, իրեն յայտնուն գործ կ՝ընէ հաւատարմութեան ուղերձ մը ղրկել առ Զար։ Ուստի՝ ծագումի կառնու այս պուլկարական յարում առ Ռուսիա. — Զի Պուլկարք սլաւական մեծ գերդաստանին մէկ անդամն են լոկ, և ո՛չ թէ ինքնուրոյն ազգ մը Հայոց կամ Յունաց պէս։ Արիւնով, կրօնով, լեզուով և դրականութեամբ անխզելի կապեր ունին Ռուսիոյ հետ։ Ռուսիա սլաւական գերդաստանին պետն է ցեղային, պատմական, աշխարհագրական և քաղաքական պատճառներով։ Աւելորդ է երկարօրէն ապացուցանել այս ակներեւ ճշմարտութիւն։ Բաց ասած, 1878 ի պատերազմն, որոյ հետեւանք եղաւ պուլկար ազգութեան նոր վիճակը, Պուլկարք Ռուսիոյ կը պարտին։ Այս երկու կարգի իրողութեանց բնական հետեւութիւնն է որ Պուլկարք աւելի կամ նուազ, այլ միշտ բացառապէս, ռուսական ազդեցութիւն պիտի կրեն, և Նոյն իսկ իրենց ազգային նը-պատակաց իրագործման համար, պիտի հակին դէպ ռուսական ազդեցութեան։ Մինչեւ իսկ,—ինչպէս տեսնուեցաւ մեր երեկի թերթով,—Պ. տը Պլոկիձ կը պնդէ թէ Պուլկարք այսուհետեւ պիտի չատանան առանց դիտողութեան ընտրելով Ռուսիոյ նշանակած ընտրելին յիշխանութիւն, շահելու համար Զարին հաստակրանքն ու հովանաւորութիւնն։ Պ. Արմինիուս Վամպերի, երեւելի ասիագէտն, իւր նամակաւ առ Թայմս, զոր թարգմանած ենք ստորեւ, կը յայտնէ թէ Պուլկարիոյ մէջ Ռուսիոյ ձեռք բերած յաղթանակն «այդ կէս-բարբարոս Տէրութեան կատարելագոյն եւ մեծագոյն յաղթանակն է Եւրոպիոյ վրայ»։ Այս եղական յաջողութեան հիմնական պատճառը պէտք է որոնենք Պուլկարիոյ և Ռուսիոյ ցեղային յարակցութեան մէջ։ Այդ պատճառաւ այսուհետեւ ալ Պուլկարաց ազգային «անկախութիւնը» կրնայ երաշ մը լինել, և Պուլկարք Ռուսիոյ նկատմամբ մշտական հնազանդութեան վիճակի մը մէջ կրնան գտնուիլ։

Այս հետեւութեան դէմ սա միակ առարկութիւնը կարելի է հանել թէ, Սերպք եւս սլաւական գերդաստանին մէկ անդամն են, բայց Միլան Թագաւորին քաղաքականութիւնը ռուսասէր ուղղութիւն մ՝ունենալ հեռի է։ Ո՞չ ապաքէն սերպ կառավարութեան լրագիրք Ռուսիոյ դէմ կը գրեն. ո՞չ ապաքէն Ռուսիա Սերպիոյ երեսը նայած չունի. ո՞չ ապաքէն Սերպիա, Ռուսիոյ զոհողութեամբ անկախութիւն ստանալով հանդերձ, Ռուսիոյ դէմ ապերախտ գտնուելու հայրենասիրական քաղաքագիտութիւնը ցոյց տուած է։ Մինչեւ Պուլկարք եւս նոյնը չե՞ն կրնար ընել, ևն։

Ի պատասխան այս առարկութեան, պէտք է յիշեցնենք թէ, Միլան Թագաւորին ոչ-ռուսասէր քաղաքականութիւնը բոլորովին նոր ուղղութիւն մ՝է Սերպիոյ համար, և կը սկսի Պ. Ռիսդիչի նախարարութեան անկման թուականէն, վերջին պատերազմէն ետքը միայն։ Արդ, Միլան Թագաւորն ինք ապահով չէ իւր գահուն վրայ. հակընդդէմ թեկնածուն, Բարեւորկեւրիչ Իշխանն, որ բաւական զօրեղ կուսակցութիւն մ՝ունի սերպ ժողովրդեան մէջ։ բոլորովին Ռուսիոյ անձնուէր է, և Միլան Թագաւորն իսկ, եթէ մնայ գահուն վրայ, կրնայ օր մը պարտաւորուիլ վերատին յիշխանութիւն կոչելու ռուսասէր կուսակցութեան պետն, զՊ. Ռիսդիչ, ինչպէս պուլկարական յաղթութեանց վրայ քիչ էր մնացած որ կոչէր։ Հետեւապէս, Սերպիոյ այժմեան ոչ-ռուսասէր քաղաքականութիւնն ազգային տեւական և հիմնաւոր ուղղութիւն մը չի կրնար համարուիլ բնաւ։ Բաց ասած, քանի որ խնդիրն ազգային անկախութեան պահպանման վրայ է, Միլան Թագաւորն եթէ Ռուսիոյ դէմ կը պաշտպանէ զայդ անկախութիւն, ուրիշ կերպիւ չըներ զայս բայց եթէ ռուսականին տեղ աւստրական թեւարկութիւն ընդունելով, որ գուցէ ռուսականէն աւելի վտանգաւոր լինի սերպական ազգութեան համար. զի եթէ Ռուսիոյ համար շատ դժուար է Դանուբն ի վեր եկնել, և Սաւայի եզերաց վրայ նոր երկիր մը իւր տիրապետութեան ներքեւ առնուլ, Աւստրիոյ համար շատ բնական է օր մը Դանուբի մէկ եզրէն միւսը քայլ մը նետելով մտնել ի Սերպիա։ Վերջապէս, եթէ մանակի բացատրութիւն Սերպիոյ այժմեան ոչ-ռուսասէր ուղղութեան, պէտք է նաև դիտնալ, թէ Սերպք իրենց անկախութեան համար (որ 60-70 տարի յառաջ կը սկսի.) Պուլկարաց չափ պարտական չեն Ռուսիոյ։ Պուլկարք չունեցան Դարեւորկեւրիչ Իշխանին մեծ-հոր՝ հրաշակաւոր Դարա Եորկիի պէս ազդապետ մը։

Ուստի, շարունակելով մեր խորհրդածութիւն, կը կրկնենք թէ, բոլորովին բացառիկ պատճառներ կան, որպէս զի Պուլկարք քիչ շատ ռուսական ազդեցութիւն կրեն։ Բայց նոյն պատճառք կա՞ն միթէ Յունաց և Հայոց նկատմամբ։

Յոյները բա՛ն մը կը պարտին Ռուսիոյ։ Հելլենական անկախութեան ստացման գործին մէջ Ռուսիա Ֆրանսայի հետ գլխաւոր բաժին ունեցած էր։ Արդարեւ, Ֆրանսա և Անգլիա բոլորովին տարբեր տեսութեամբ մասնակցած էին այդ գործի։ Ֆրանսա պարզապէս աղատութեան խնդիր մը կը նկատէր դայն, մինչ Ռուսիոյ փափաքն ո՛չ այնչափ հելլենական ազգութեան վերածնութիւնն էր, որչափ Օսմ. Տէրութեան տկարացումն, և ճշդիւ այս պատճառաւ Անգլիա «ղբալի թիւրիմացութիւն» նկատեց Նաւարինի պատերազմը։ Բայց վերջապէս, Ռուսիա դեր մ՝ունեցաւ հելլենական անկախութեան մէջ։ Այնու հանդերձ, Հելլենը շատ պատճառներ ունին Ռուսիոյ չհամակրելու. զի ռուս քաղաքականութեան արդի ուղղութիւնն Հելլենութեան կենսական շահուց վտանգաւոր է։ Համասլաւութիւնը, Զարին կառավարութենէն ուղղապէս քաջալերեալ, աչք տնկած է յունական դաւառներուն վրայ, զանոնք սլաւական մարմնոյն հետ միացնելու տենչով։ Սլաւութեան արեւելեան յառաջդիմութիւնը այսուհետեւ մէկ մէկ հարուած են Հելլենութեան, և հետեւապէս, Պալքանաց վրայ ռուսական ազդեցութեան աճումը, փոխանակ յոյն տարրն եւս նոյն ազդեցութեան ենթարկելու, ընդհակառակն պիտի ստստկացնէ Յունաց կամ Հելլենաց հակառուս զգացումները։

Դալով Հայոց, անոնք ևս թէեւ ամեն ռուսական յառաջխաղացութենէ Յոյներէն աւելի կը վնասուին, բայց Յունաց չափ ալ բան չեն պարտիր Ռուսիոյ։ Մեր աչաց առջեւ է Կաւկասիոյ Հայոց վիճակն, որ հեռի է նախանձելի լինելէ։ Հայք դժբախտութիւններ, ազգային կորուստներ միայն կը պարտին Ռուսիոյ։ Արդարեւ, Ռուսասէրքը կը-սեն թէ Էջմիածնի և շրջակայ հայաբնակ երկրին արդի ապահով վիճակն և Հայոց ազգային-եկեղեցական նուիրական կեդրոնին պահպանութիւնը Ռուսիոյ կը պարտինք։ Այսու կ՝ակարկուի պարսիկ իշխանութեան նախկին բռնապետութիւնը։ Բայց այս բռնապետութիւն առաւելապէս նիւթական հարստահարութեանց շարք մ՝էր։ Պարսիկ Խաներ կը կողոպտէին Էջմիածինը, կը դատակոծէին միաբաններն, և կը կեղեքէին շրջակայ հայ ժողովուրդն։ Արդ, դիտելի է՝ նախ՝ թէ բարոյական հարստահարութիւնը կամ ձուլման քաղաքականութիւնը շատ աւելի աղետաբեր է ազգային դպրոց հաստատութեանց համար քան նիւթական և անմիջական բռնութիւնը։ Կողոպտուած գանձը ընուլ, քայքայեալ շէնքը նորոգել դիւրին է, և առ ադաւելն ժամանակի գործ է։ Ապօրէն վիճակ մը չի կրնար միայն կամ տեւական լինել, և պարսկային հարստահարութիւնն ու կեղեքումն ապօրէն վիճակ մ՝էր լոկ։ Այլ ո՞չ ապաքէն անհունապէս աւելի աղետաբեր են օրինական սեղմումներն, ազգային-եկեղեցական դարաւոր առանձնաշնորհմանց և իրաւանց դրական փըճացումներն։ Եթէ նիւթական վաղանցիկ հարստահարութիւնը կը պարտեցնէ պարսիկ իշխանութեան, այս վերջին և շատ աւելի վնասակար բարոյական հարստահարութիւնը կը պարտինք ռուսական իշխանութեան։ Մնաց որ, եթէ Էջմիածին և Երեւան դեռ եւս պարսիկ իշխանութեան ներքեւ մնային, ո՛չ մէկ Ռուսասէր կը-նայ ըսել թէ վաթսուն տարի առաջուան անմնանձելի պայմանաց մէջ պիտի գտնուէին։ Այսքր Ատրպատականն նահանգին մէջ համեմատաբար բաւական ապահովութիւն կայ, և տեղւոյն փափկութիւնն ի հաշիւ առնելով՝ պարսիկ կառավարութիւնն անշուշտ շատ աւելի հոգ պիտի տանէր Էջմիածնի շրջանն ապահովութեան պահպանման։ Եթէ ժամանակիս քաղաքակրթիչ պայմանք զգալի են այս աւուր Պարսկաստանի ուրիշ կողմերը, պատճառ մը չկայ հնթադրելու թէ Երեւանայ նահանգը դուրս մնար այդ պայմանաց ներգործութեան շրջանակէն, եթէ վեհ. Շահին իշխանութեան ներքեւ գտնուէր տակաւին։

Եզրակացնելով, կըսենք թէ, Պալքանաց կողմն Ռուսիոյ ազդեցութեան աւելնալը պատճառ մը չէ բնաւ կարծելու թէ ռուսական ազդեցութիւնը կարենայ տարածուիլ Յունաց և Հայոց վրայ։ Յոյնք եւս քան զեւս կահանուս պիտի դառնան քանի որ Համասլաւութեան յառաջխաղացութիւնը տեսնեն, և Հայք, որք կրկնե՛նք Յունաց չափ ալ բան չեն պարտիր Ռուսիոյ, անոնցմէ աւելի պատճառներ ունին ռուս ազդեցութենէն խորշելու։ Հետեւապէս, թէպէտ պուլկար հայրենասէրը ընկճին Ռուսիոյ դէմ մնած իրենց անհաւասար մարտին մէջ, թէպէտ Պալքանաց երկու կողմը ռուսասէր կուսակցութիւնն յաղթանակ տանի, այս բան չի կրնար բնաւ օրինակ մը լինել Օսմ. Տէրութեան հպատակ ուրիշ քրիստոնեայ ազգութեանց համար։ Մեք ինչպէս ցարդ, այսուհետեւ ալ պիտի հետաքրքրինք պուլկարական խնդրոյն, և անոր զանազան երեւոյթները խղճի մտօք պիտի ներկայացնենք մեր ընթերցողաց. բայց ա՛չ թէ օրավհետեւ Պուլկարաց Ռուսիոյ հետ ունեցած խնդրէն Հայք բան մը կրնան սովրիլ իրենց ազգային ուղղութեան համար, այլ զի պուլկարական խնդրէն է այսօր կարեւորագոյն մնան Արեւելեան Խնդրոյն, որ կենսական կարեւորութիւն ունի Թուրքիոյ ամեն մասանց համար։

«ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ԱՍԻԱ»

Այս խորագրով, Թայմս, սեպտ. 14 թուով, կը հրատարակէ հետեւեալ նամակն Պ. Արմինիուս Վամպերիի, երեւելի ասիագէտ, Բրոֆէսօր Պուատաբէշչայի Համալսարանին, հանրածանօթ իւր ուղեւորութեամբք ի Կեդր. Ասիա և իւր հրատարակութեամբք արեւելեան երկրաց և ազգաց վրայ։

«Ռուսիոյ յաղթանակն ի Պուլկարիա՝ կատարելագոյն և մեծագոյն յաղթանակն է, զոր այդ հիւսիսային կէս-բարբարոս Տէրութիւն ցարդ կարող եղած լինի շահիլ Եւրոպիոյ դէմ։ Զեմ խօսիր նոր կողմերուն և վրդովիչ անիրաւութեան վրայ որով այս անօրինակ յաջողութիւն ձեռք բերուեցաւ. ո՛չ ալ կը յիշեմ ամեն ոգեմիտ անձի սրտակեսութիւնն ի տես բռնապետութեան մը, որ ամենայն արհամարհանօք առաքուր կը կոխէ դաշնագրեր, պարտաւորութիւններ, ճշմարտութիւն և պատուոյ խօսք. այլ թոյլատուութիւն կը խընդրեմ ուշադրութիւն հրաւիրելու սա մասնաւոր իրողութեան վրայ թէ, Ռուսիոյ այս քմահաճ գործողութիւն ո՛րպիսի մեծ վնասնդի կենթարկի մեր արեւմտեան քաղաքակրթութիւն յաչս ամեն Ասիացւոյ, Վասլոյրէն մինչեւ Ճապոն, և Կեդր. Ասիայէն մինչեւ Հնդկաստանի հարաւային ծայրը։ Մեր գիտնականներուն ամենեցուն ակարութեան և մեր կառավարութեանց գիտակցաբար անհամաձայնութեան պատճառած խորին վերքերն ընդերկար զգալի պիտի լինին մեր եւրոպական աչխարհին քաղաքական կազմակերպութեան մէջ։ բայց շատ աւելի ծանր և վտանգաւոր են Եւրոպիոյ այս նաւատատութեան հետեւանքները մեր ապագայ յարաբերութեանց մէջ Ասիոյ զանազան ազգաց հետ։ Պէտք չէ մոռնանք թէ արեւելեան ժողովուրդներու զարկատութիւնք, որք հետզհետէ հետ կը մղին կարեւոր լուրերը տարածելու կողմ, մահմէտական և պրոտոստանտ Ասիոյ ամեն կողմը պիտի ծաւալեն ռուսական զօրութեան լուրը, և ի՞նչ պիտի ըսեն այն ժողովուրդք, լսելով թէ ռուսական հրաման մը միայն բաւ եղած է տասալելու Իշխան մը կարգելու Եւրոպայէն, և թէ ո՛չ ոք համարձակած է ձայն բարձրացնել Բեղերապուրիի եկող հրամանին դէմ։

«Անշուշտ Գերմանիա հոգ չըներ արեւելեան աչխարհի հայեցքներուն և գաղափարներուն համար. բայց Աւստրիա, Ֆրանսա և մանաւանդ Անգլիա միթէ կրնա՞ն անտարբեր մնալ, և հաւանիլ այն խորին տպաւորութեան զոր Ռուսիոյ այս յաղթանակն ի հարկէ յառաջ պիտի բերէ։ Զարիքն անհաշուելի է և մասին այն Մահմետականաց, որք արդէն զգացած են Բիրուզի նաւաբեկման վրայ։

«Ինչ որ ամեն մարդ ունի, նաւապե՛տ, պատասխանեցի.

—Կրնա՞ք ծանուցանել ինձ ամեն մարդոց ունեցած տեղեկութիւնն, հարցուց ինձ քիչ մը հեգնոտ ձայնիւ։

—Յոյժ դիւրաւ։»

Եւ պատմեցի նմա ինչ որ Տիւմոն-տ'Իւրվիլի վերջին հրատարակութիւնը ծանուցած էին, հրատարակութիւնք, որոց համառօտ բովանդակութիւնն այս է։

Լա Բիրուզ եւ իւր երկրորդը, նաւապետ Տը Լանկլ, Լուի ԺԶ ի հրամանաւ շրջանաւական ուղեւորութիւն մ՝ընելու ղրկուեցան 1785 ին, Պոսոլ եւ Անթրեկաստրոյ քորվէթներով, որք ոչ եւս երեւան եկան։

1791 ին, Ֆրանսական կառավարութիւնն իրաւամբ սրատանջութեան մէջ ընկնելով, երկու մեծ առագաստանաւ դինեց, Ռոշէֆորտ եւ Լաբիշոնա, որք սեպտ. 18 ին մեկնեցան Պրէսթէն, ընդ հրամանատարութեամբ Պրիւնի տ'Անթրքասթոյ նաւապետին։ Երկու ամիս յետոյ, Ալշերմալի հրամանատար Պովէն անուն նաւապետի մը բերած տեղեկութենէն իմացուեցաւ թէ խորտակեալ նաւուց բեկորք տեսնուած էին Նոր-Ժէորժիի ծովեզերաց վրայ։ Բայց տ'Անթրքասթոյ, անգէտ այս տեղեկութեան, որ շատ վստահելի ալ չէր, Ամերիկայ կղզեաց կողմերը դիմեց, որք իբրեւ Լա Բիրուզի նաւաբեկման տեղի նշանակուած էին Հընթէր նաւապետին մէկ տեղեկագրին մէջ։

(Շարունակելի)

—)(41)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻԼ ՎԷՐՆ

ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ՓԱՐՍԱԽ ԾՈՎԵՐՈՒՆ ՏԱԿ

ՊՍԱԿԵԱԼ Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԷՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՎԱՆԻՔՈՐՈՅ

Իրիկուան դէմ, Ֆլէրմոն-Թոնէռ կղզին անտեսանելի եղաւ հեռաւորութեան մէջ, եւ Նոթիլիոսի ուղին զգալապէս փոխուեցաւ։ Երկայնութեան հարիւր հրսուն-հինգ աստիճանին տակ Այժեղիւրի արեւադարձն անցնելէ յետոյ՝ ուղղուեցաւ դէպ յարեւմտեան հիւսիս, արեւադարձական ամբողջ գօտին վեր ելնելով։ Թէ եւ արեւը կը շաւայէր իւր ճառագայթները, մեզ բնաւ չեկնը նեղուեր տաքէ, վասն զի ջուրին երեսէն երկու կամ քառասուն մետր վար, օդին ջերմութիւնը տասնէն տասն-երկու աստիճանը չէր անցներ։

Դեկտ. 15 ին մեր արեւելեան կողմը թողուցինք Սոսիէթէի ակնապարար արշիպեղագոյնն եւ Թայֆիի շնորհաշուք կղզին, Խաղաղականի դէմոյն։ Առաւօտուն, բանի մը մղոն հեռին տեսայ այդ կղզւոյն բարձր կատարներն։ Իւր ջուրերը պատուական ձուկեր ընձեռեցին Նոթիլիոսի սեղաններուն, թիւնիներ, բոնիներ, ալբիկորներ եւ միւներոթիա կոչուած ծովային օձի մը տեսակներ։

Նոթիլիոս ութ հազար հարիւր մղոն ճանապարհ ըրած էր։ Լոքն ինն հազար եօթն հարիւր քսան մղոն կը նշանակէր երբոր Թանկա-Թապուի արշիպեղագոյնին մէջէն անցանք, ուր Աբէյոյ, Բոբե-օ-Բրէնոի եւ Տէօ-օվ-Բոթլանդ ի նաւաձները կրան, եւ Նաւարդաց արշիպեղագոյնն, ուր ապանոնեցաւ Տը Լանկլ նաւապետը, Լա Բիրուզի բարեկամը։ Ցետոյ Վիթիի արշիպեղագոյնն անցանք, ուր վայրենիք կոտորեցին Իմանոնի նաւաստիներն եւ Էմպլ-Ժանէթիի հրամանատար Ֆիւրոյ նաւապետն։

Այս արշիպէլ կամ կղզեպար, որ հիւսիսէն հարաւ հարիւր վարսամ, եւ արեւելքէն արեւմուտք իննսուն վարսամ ընդարձակութիւն ունի, հարաւային լայնութեան 6 եւ 2, եւ արեւմտեան երկայնութեան 174 եւ 179 աստիճաններուն միջեւ կը գտնուի։ Քանի մը կղզիներէ, կղզեակներէ եւ խութերէ կը բաղկանայ, որոց մէջ նշանակութեան արժանի են Վիթիլէվու Վինուա-Լէվու եւ Քանտիւպտն կղզիք։

Այս կղզեխումբն 1643 ին գտած է Թասման նաւապետը, նոյն տարին՝ յորում Թորիչէլի օդաչափը կը հնարէր եւ յորում Լուի ԺԴ. Ֆրանսայի դահը կ՝ամբառնար։ Ընթերցողաց կը թողում խորհիլ թէ այս իրողութենէն ո՞րն առաւել օգտակար եղաւ մարդկութեան։ Ցետոյ եկան Քուք նաւապետ 1714 ին, տ'Անթրքասթոյ 1793 ին, եւ վերջապէս Տիւմոն-տ'Իւրվիլ 1827 ին մաքրեց այդ արշիպեղագոյնին աշխարհագրական քաւսը։ Նոթիլիոս Վայլէյի ծովածոցին մտնելուս, թատերավայր սարսափելի արկածից Տիյեոն նաւապետին, որ ամենէն առաջ լուսաւորեց Լա Բիրուզի նաւաբեկման գաղտնիքը։

Այդ ծովմորոշ, քանիցս անգամ քերուելով, պատուական ոստրէներ մատակարարեց, զոր, Ենենկոյի պատուէրին համաձայն, մեր սեղանին վրայ բանալով կերանք անյագաբար։ Այս կակղամորթք Օմբրիա Լամպլոնա անուամբ ծանօթ տեսակէն էին, որ շատ կը գտնուի Կորսիկա կղզւոյն շուրջն։ Վայլէյայի ոստրէատան յոյժ մեծ պարտէր լինել, եւ տարակոյս չկայ, որ առանց ջնջման բաղադրիմի պատճառներու, այդ կակղամորթք կրնային վերջապէս լնուլ ծովախորշերն, որովհետեւ մէկ հատին մէջ մինչեւ երկու հարիւր միլիոն ձու կը համրուին։

Եւ եթէ վարպետ Լանտ չէր զգլաբ այս առիթիւ ըրած զրկրամոլութեան վրայ, պատճառն այս էր որ ոստրէն այն միակ կերակուրն է որ դժուարամարսութիւն չպատճառեր երբէք։ Արդարեւ առ նուազն տասն-վեց երկոտասանեակ պէտք է այդ անգլուխ կակղամորթներէն, որպէս զի մարդու մ՝օրական սնունդին պէտք եղած երեք հարիւր տասն-հինգ կրամ բորակածին կազ պարունակող հիւթ մատակարարեն։

Դեկտ. 25 ին, Նոթիլիոս Նոր-Հեբրիտաց արշիպեղագոյնի մէջ մտած էր, զոր Բուգիրոս գտաւ 1606 ին, Պուկէնվիլ հետախուզեց 1768 ին, եւ որում Քուք արդի անունը տուաւ 1773 ին։ Այս կղզեպար գլխաւորապէս ինն մեծ կղզիներէ կը բաղկանայ, եւ հարիւր քսան փարսախ երկայնութեամբ երիզ մը կը ձեւացնէ հիւսիսային արեւմուտքէն ի հարաւային արեւելք, հարաւային լայնութեան 15 եւ 2 եւ երկայնութեան 164 եւ 168 աստիճաններուն միջեւ։ Աւերու կղզւոյն բաւական մօտէն անցանք, որ միջոցի զնուութեանց պահուն կանանչ ծառերու կապի մը պէս երեւցաւ ինձ, բարձր տարի մը մ՝ստորոտն։

Այն օրը ծնունդ էր, եւ Նէտ լանտ մեծ ցաւ ցոյց տուաւ «Քրիսթմասի» ծանէն զուրկ մնալուն վրայ, այն իսկապէս ընտանեկան ծանէն, որոյ մասին բաղձալանք յոյժ մեր եղանդ են։

Ես ութ օրէ ի վեր տեսած չէի Նըմոյ նաւապետ։ Դեկտ. 27 ին առաւօտուն մեծ դէպքերը մտաբ տ'Անթրքասթոյ մարդու մը դէմքով, որ կարծես հարիւր վայրենիներ ի վեր մեկնած էր քովէս։ Ես հարցուցի՝ տին վրայ Նոթիլիոսի ուղին գտնելու զբաղած էր։ Նաւապետը քովս եկաւ, եւ մատը քարտէսին մէկ կէտին վրայ դնելով, սա միակ խօսքն արտասանեց։

«Վանիքորոյ։»

Այս անուն դիւթեց զիս։ Այն կղզեկաց միայն անունն էր, որոյ վրայ գնացին կորան Լա Բիրուզի նաւերը։ Իսկոյն վեր ելայ գլուխս։

«Նոթիլիոս մեզ Վանիքորոյ կը տանի, հարցուցի։

—Այո՛, պարոն դաստուս, պատասխանեց նաւապետը։

—Եւ ես պիտի կրնա՞մ այցել այն հրաշակաւոր կղզիներն, որոց վրայ խորտակեցան Պոսոլ եւ Անթրքասթ։

—Եթէ հանձն կը թուի ձեզ, պարո՛ն դաստուս։»

Եւ դարատափին վրայ երայ Նըմոյ նաւապետին հետ եւ աչերս հորիզոնին վրայ պտտցուցի ըղձատենչ։

Հիւսիսային-արեւելքի կողմն երկու հրաբխային կղզիք կը նշմարուէին անհաւասար մեծութեամբ, բուստերու խարսխով մը պատեալ, որ քառասուն մղոնի շրջածիր մ՝ունէր։ Բուն Վանիքորոյ կղզւոյն մասն էինք, զոր Տիւմոն տ'Իւրվիլ Խուզարկման կղզի (Ռըշէրշ) անուանած է, ճշդիւ Վանուի փոքրիկ նաւահանգստին առջեւ հարաւային լայնութեան 16° 4′, եւ արեւելեան երկայնութեան 164° 32′ աստիճանին տակ։ Երկիրը կանաչագարդ կը թուէր ծովափէն մինչեւ ներքին կատարներն, որոց վրայ կ՝ելնէր Քաբոկոյ լեռը, չորս հարիւր եօթանասուն-վեց ճողաչափ բարձրութենէ։

Նոթիլիոս, նեղ անցքէ մը ժայռերուն արտաքին գօտին անցնելով՝ խարակներուն ներքին կողմը մտաւ, ուր ծովն երասնէն քառասուն մետր խորութիւն ունէր։ Պալուտվենեաց դարաբագեղ հովանոյն տակ քանի մը վարդենիներ տեսայ, որք չափէ դուրս զարմանք ցոյց տուին մեր մտանելուն վրայ։ Նոթիլիոսի երկայն եւ սեւաթոյր մարմինն, որ ծովուն մակերեւութին հաւասարութեամբ կը յառաջանար, զարհուրելի կիտագի մը կը կարծէին։

Նոյն միջոցին Նըմոյ նաւապետն հարցուց ինձ թէ ի՞նչ տեղեկութիւն ունէի Լա Բիրուզի նաւաբեկման վրայ։

«Ինչ որ ամեն մարդ ունի, նաւապե՛տ, պատասխանեցի.

—Կրնա՞ք ծանուցանել ինձ ամեն մարդոց ունեցած տեղեկութիւնն, հարցուց ինձ քիչ մը հեգնոտ ձայնիւ։

—Յոյժ դիւրաւ։»

Եւ պատմեցի նմա ինչ որ Տիւմոն-տ'Իւրվիլի վերջին հրատարակութիւնը ծանուցած էին, հրատարակութիւնք, որոց համառօտ բովանդակութիւնն այս է։

Լա Բիրուզ եւ իւր երկրորդը, նաւապետ Տը Լանկլ, Լուի ԺԶ ի հրամանաւ շրջանաւական ուղեւորութիւն մ՝ընելու ղրկուեցան 1785 ին, Պոսոլ եւ Անթրքասթրվէթներով, որք ոչ եւս երեւան եկան։

1791 ին, Ֆրանսական կառավարութիւնն իրաւամբ սրատանջութեան մէջ ընկնելով, երկու մեծ առագաստանաւ դինեց, Ռոշէֆորտ եւ Լաբիշոնա, որք սեպտ. 18 ին մեկնեցան Պրէսթէն, ընդ հրամանատարութեամբ Պրիւնի տ'Անթրքասթոյ նաւապետին։ Երկու ամիս յետոյ, Ալշերմալի հրամանատար Պովէն անուն նաւապետի մը բերած տեղեկութենէն իմացուեցաւ թէ խորտակեալ նաւուց բեկորք տեսնուած էին Նոր-Ժէորժիի ծովեզերաց վրայ։ Բայց տ'Անթրքասթոյ, անգէտ այս տեղեկութեան, որ շատ վստահելի ալ չէր, Ամերիկայ կղզեաց կողմերը դիմեց, որք իբրեւ Լա Բիրուզի նաւաբեկման տեղի նշանակուած էին Հընթէր նաւապետին մէկ տեղեկագրին մէջ։

(Շարունակելի)

ՈՎՀԱՆ Հ. ԳՈՒՐՋԻՆՈՎԻՆ

ՀԱՅԿԱՆ ԳԱԺԱՆԱԿ

Ամերիկայի Հայ Դեմոկրատական Կուսակցության Նախագահ Ս. Ս. Ռոստոմի հրավերքով Ամերիկայի Հայ Դեմոկրատական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի անդամներ Ս. Ս. Ռոստոմ, Ս. Ս. Ռոստոմ, Ս. Ս. Ռոստոմ,

մայրէ։ Հարկաւ Դերձակեան Սրբազան այդ խնդրոյ համար ալ խօսած է եղեր Ն. Վսեմութեան։

—Մեզ տեղեկութիւն կուտան Դաշտի կարեւոր գիւղերէ մէկէ մը, թէ գիւղացի քանի մը յայտնի աշխներ հանրագրեր կը չինեն Մուշ եւ Վանքը միացնելու համար յանձին Ռաշնոցի եկեղեցականի մը. որո՞ւ դրդմամբ է չեմք գիտեր. բայց այս գիտեմք, որ այդ միջոցներուն ժողովուրդը բնաւ չհաւանիր և չընդունիր. արդէն ժողովրդեան խոհուն մասը լաւ գիտէ, որ հանրագրական այդ միջոցներով միացում անկարելի է, զի վանքի և վանքի խնդրոյն միայն Պատրիարքարան և տեղական Ազգ. ժողովներն ձեռնհասութիւն ունին։

—Քաղաքիս բնակիչներէն հայ կին մը անցեալ տարի Մաժմանականութիւն ընդունած էր։ Սա քանի մ'ամիս Զոլբրի կողմեր Քրդի մը տուն մնալէ յետոյ, անցեալներս ձգեց տիսաւ յԱռաջնորդարան, կամք յայտնելով վերադառնալ ի գիրկ մայրենի եկեղեցւոյ։ Սոքթաներէն ոմանք առնոր փախուստը լսելով, առաջնորդութեամբ Միքիթի էֆէնտիի որդւոյն՝ Ճիկրաչէն թաղը կ'երթան կինը փնտռելու, եւ քանի մը հայոց տուներ կը կոխեն, սակայն կառավարութիւնն իմանալով անոնցմէ զոմանս կը ձերբակալէ եւ կը բանտարկէ։ Հետեւեալ օր կինը կը տայուի կառավարութեան եւ կը հարցաքննուի։ կը պատասխանէ թէ ինքը սրտով հայ Քրիստոնեայ է եւ այժմ նոյնն իւր Քրիստոնական հաւատքը կ'ընդունի եւն։ Կնոջ այս պարզ յայտարարութեան հակառակ՝ փոխանակ զայն Առաջնորդարանի յանձնելու, տանձի մը տուն կը դնեն, 7-8 օրէ յետոյ անկէ կը հանեն ուրիշ տուն մը, եւ անկէ աղջիկը անհետացած է։ Առաջնորդարանը թաղերու տարով աղջիկը կը պահանջէ։

—Ս. Առաջնորդը բացակայ է տեղէն ի Պուլանըք. ի մեծագոյն Ն. Գերապատուութեան վերադարձին։ թէ եւ քիչ ինչ ուշացաւ, բայց Պուլանըքի մէջ ալ բազում ազգ. խնդիրներ կան, որք անմիջական լուծման կարօտ են։

ԵՐԶՆԿԱ, 28 յուլիս.

Սղերդի ազգայնոց վիճակն ամէն տեսակէտով դառնացած է, գլխաւորապէս քահանայից ընտրութեան վիճակն Առաջնորդ Հօր տարտուկ կը պատճառէ։ — Գորութիւնը սկսած են ասէպ տեղի ունենալ և Առաջնորդ Զաքարեան Տ. Ղազար Ծ. վարդապետ մին պիտի լինէր զոհերէն, որոյ յանցանքի վերաբերեալ հրացան մը պրպտած էր գիւղը տեսն երբ սուրբ հայրը ջուր կը խմէր։ Ոճրագործն՝ որ չէր յաջողած բարեբաղդաբար ինա հասուցանել գիւղուհան մթութեան պատճառաւ՝ տակաւին չէ գտնուած։

—Ռնտուանի Մխայեալ Ընկերութեանց վարչութեան տարեկան բերանացի քննութիւնը տեղի ունեցան Յուլիս 28, 29 և 30ին. ընդ նախագահութեամբ Գայմագամ և դատաւոր էֆէնտիներու։ հաճած էին պատուել նաև կառավարական և ժողովրդական ամէն ազգի և կարգի անձնաւորութիւնք որք յատկապէս հրաւիրուած էին։ քննութիւնք յոյժ գոհացուցիչ էին։ Դրաւոր քննութիւններն առաջ կատարուեցան և զբաղուեցան ի Մուշ, Կ. Պոլիս զրկուելու համար։

—Ռնտուանի Գայմագամ և Բէնէ լբրագրի խմբագիր Նորի պէյ փոխադրեցան ամսոյս սկիզբն ի Խիան։ Նորա այս փոխադրութիւն վնասակար էր Ռնտուանցւոց. մեկնած պահուն այցելեց Ընկերական վարժարանն և տուաւ իւր վերջին հրաժեշտն, ուստի սաներով ճանապարհ դրուեցաւ։

—Ռնտուանի առեւտուրն անձուկ է, ժողովուրդն այս տարի խիստ նեղուած է, ցորեններն ինչ ինչ տեղեր գոհացուցիչ չեն, գարին յոյժ նուազ նոյնպէս և յարդն. բամբակ, բանջարեղէն և պտղեղէն ալ յոյժ տուաղ են, զի կարկուտ և մարախ մեծապէս վնասեցին։ մինչ ի Տիգրանակերտ, ժողովրդեան վիճակն առաջիկայ տարին աւելի երկիւղալի է, զի մարախները ձու ձրգած են և միջոց մը գտնուած չէ զանոնք վճաքնելու, զի խիստ շատ են և խոշոր։

—Աշիթանի Ռաման Աշիրէթի ապատակոցը Ռտուանի դատաւորին տունը գիշեր առեն բազմութեամբ մտնելով, զինքն և իւր զաւակները կապած ու բոլոր գոյքերը տարած են և ցարդ բռնուած չեն. այս եղելութիւն մեծ ցաւ պատճառած է համայն տեղացւոց, զի յիշեալ դատաւորը խիստ պարկեշտ, խղճահար եւ ժողովրդական անձ մ'է և ամէն ոք գոհ է իրմէ։

—Երզնկայի համայն վարժարանք արձակուրդ ըրած են։ Քաղաքին Ս. Երրորդութեան եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդը կեդր. Վարժարանի Պիտանէն ապահովելու համար, որ արդէն բաւական ապահով եկամուտ ունի, այս անդամ ևս քակելով ազգային թատրոնը չենել կուտայ վեց տուն՝ որք առ նուազն 18-20 օսմ. ոսկի տարեկան հասոյթ կունան ըերել։ Իսկ Ս. Նշան եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդն աւարտելու մօտ է իւր ի հիմանց սկսած վարժարանի չէնքն որ 400 ոսկւով հաղիւ կ'աւարտի, է երկյարկ եւ կը բաղկանայ 7 սենեակէ։ չէնքն յոյժ ընտիր է եւ հոսուուն։ կը յուսանք որ հանգանատասխանող կրթական ընթացք մ'ալ կ'ունենայ եւ պատուաբեր կը լինի երիտասարդոյ։ Գոհունակութեան արժանի են երկու Թաղ. Խորհրդոց կրթութեան յարատեւութեան համար բրած ջանքերն եւ զոհողութիւններն. գոհունակութեան արժանի է նաև մասնաւորապէս Ս. Նշանի Թաղ. Խորհրդոյ հանդանակութեան կատարելապէս ի գլուխ հանման համար թափած ճիգերն եւ իւր հասոյթի ազբիւր երկու տուն եւս չինելու երեկ ձեռնարկելն, որոց տարեկան վարձքն այժմէն կտրուած է տանուտեարի ոսկի։

Կ. Տ. Խ.

ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ

——

«Ինչ որ մենք մեր աչօք տեսանք եւ մեր ականջօք լսեցինք ականատես եւ ականջալուր եղանք՝ գրեցիցք ձեզ համար որպէս զի ձեր նոխնեաց քաջագործութիւնները կարդալով խրախուսուիք, եւ սոցա օրինակին հետեւող լինիք՝ դուք ևս պաշտպանեք Հայ-Հաւատն, Հայ-Եկեղեցին։»

Պարէս Բէկնազարեանց»։

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ՝

——

Ես բնակում էի Շուշում, Կընդ-Դանուց (՝) Սարգսի տան միջնայարկում վարձքով։ Սպասաւորս արդէն բացակայ էր և ես միայնակ էի։ 1881 Թուին և մայիս 5ին, կէսօրի մօտ, բացուեցաւ սենեկիս դուռնն, ներս մտաւ, գրեթէ, մի հարիւրամեայ, ալեզարդ ծերունի, բարեւեց յարգանօք և նստաւ մի թիկնաթոռի վերայ։

Ծերունին ունէր բարձր և ուղղաձիգ հասակ, մինչև եւ գեղեցկաձեւ գլուխ, պատկառելի կերպարանք, հըրապուրիչ դէմք, թաւամազ յօնքեր, մեծ մեծ աչքեր, հաստ հաստ պեխեր, փառահեղ եւ սպիտակ մօրուք։ Ինքն տակաւին ժիր էր, բայց կասկածոտ և երկչոտ, ինչպէս նշմարեցի իւր շարժուձեւերից։ Ծերունու ձեռներն դողդոջուն չէին, ինչպէս նշմարուեմ է այդ շատ զառամելոց վերայ։ միայն թէ թափուած էին իւր գլորակ գլխի մազերն։ Այսու ամենայնիւ դեռ անկորուստ էին մտաւոր և մարմնաւոր կարողութիւններն։

Հնամաշ, խարտն և կարկատուած էին իւր զգեստներն։

Ծերունին հանեց իւր կռնատակից թաշկինակներով փաթաթուած մի ծըրար և այն ինձ ներկայացնելով ասաց.

—Ես լսեցի որ դուք իմ համագիւղացի էք և հետաքրքրուած էք ծերունիներից քաղել Ղարաբաղի անցեալ պատմութիւնը։ այս պատճառով ես հարցափրձ անելով եկի ձեզ մօտ։ Համարեա թէ մի դարին մօտենում է որ ես այս «ԳԱՂՏՆԻՐ-ՂԱՐԱԲԱՂԻ» ձեռագիրը մասունքի նման զգուշութեամբ պահպանել եմ։ Սորա մէջ թէ՛ շատ վըտանգաւոր դաղտնիքներ կան և թէ՛ Ղարաբաղի պատմութեան վերաբերեալ անգին գանձեր։ Բայց այսուհետև էլ կեանքիցս չեմ վախում, որովհետեւ մահս մօտենում է և սորա վերջին գըլուխը գրել, պրծել եմ։ Համագիւղացիութեան սէրն ինձ քաջալերվ ձեզ մօտ բերաւ։ քանզի քաղցր է Հայրենիքն, քաղցրագոյն է ծննդեան տեղն և սիրելի համագիւղակիցն։

Հիմի ձեզ եմ նուիրում «ԳԱՂՏՆԻՐ-ՂԱՐԱԲԱՂԻ»ն վստահօրէն։ Դուք նախ դորա լեզուն աշխարհաբար փոխեցէք և ապա հրատարակել տուէք, որպէս զի դիւրըմբռնելի լինի դորա իմաստներն հասարակութեան։ Հիմի գրականական լեզուն աշխարհաբարն է և ոչ թէ գրաբարն, որ շատերին անհասկանալի է։

Վերջապէս այս է միայն իմ սրբազան կտակն — երկու տարի էլ համբերեցէք և ապա հրատարակել տուէք, եթէ արժան կը համարէք հրատարակութեան և եթէ կը յարգէք իմ կտակը։

Ցեռոյ «յաւիտեան Ճա՛ք բարեաւ» ասելով հեռացաւ ծերունին։ Շատ ջանացի, թախանձեցի զինքն արգելել, պատուասիրել, վարձատրել և իմանալ իւր անունը եւ ազգանունը, բայց ի զո՛ւր։

—Իմ վարձատրութիւնը այն է որ տպագրել տաք այդ ձեռագիրը։ իմ յարգանքը և պատիւը այն է որ ճըշտիւ կատարէք իմ կտակը և պատուէրը։ իմ անունը եւ ազգանունը կ'իմանաք ձեռագրից։

Սոքա եղան ծերունու վերջին խօսքերը և նա հեռացաւ իմ բնակարանից։

Առ վայր մի ակչած Ճացի, կարծելով թէ տեսածս կա՛մ երազ էր եւ կա՛մ երազանման մի երեւոյթ։

Անձկանօք բացի թաշկինակները և անյապաղ կարդացի ծայրէ ծայր։

Ձեռագիրն կազմուած էր. թղթերն կապտագոյն և հաստ էին, դիրքն երկար և լայն, և փետրագրչով գրուած նօտրագրերն գեղեցիկ և դիւրաւ վերծանելի։

«ԳԱՂՏՆԻՐ-ՂԱՐԱԲԱՂԻ»ն յառաջաբան չունէր և ոչ՝ վասն այ՝ ինչ էրաց, վասն այ՝ ինչ էրաց, նախնի պատմագրաց վերնագրի ձեւը, որք սովորաբար գրուած են լինում գլուխների ճակատներն. այլ Ա. Բ. Գ. եւն։

«ԳԱՂՏՆԻՐ ՂԱՐԱԲԱՂԻ»ն բաղկացած էր երկու հատորից։ Երկրորդ հատորում՝ ժամանակագրական կարգաւ, գեղեցիկ դասաւորուած են թէ՛ պատմական անցքերն և թէ՛ զանազան մարդիկներից գրուած բոլոր նամակներն։ Իսկ առաջի հատորում՝ ընդհակառակն է տեսնւում. այսինքն սկսում է 1795 թուից և յետ տանում մինչև Աղուանից առաջին թագաւորի ծագումն։ Մեր կարծիքով եթէ սոյն հատորի դասաւորութիւնն ևս ժամանակագրական կարգաւ եղած լինէր՝ աւելի լաւ կը լինէր. բայց մենք նոյնութեամբ անփոփոխ պահեցինք։

Առաջին հատորն գրուած է Աբրահամ Բէկնազարեանցի թելադրութեամբ և իւր որդու Ապրէս Բէկնազարեանցի գրութեամբ։ Իսկ երկրորդն Աբրահամ Բէկնազարեանցի կարգադրութեամբ և հօր ու որդու խորհրդակցութեամբ։ Այսու ամենայնիւ պատմագրութեան ղեկավարն միշտ եղած է հայրն։

Յայտնի երևում է որ Աբրահամ Բէկնազարեանցն երևելի պատմագէտ եղած է։ Աւելորդ է ասել որ այդ պատմական հմտութիւնն ոչ միայն փայլում է իւր բոլոր խօսակցութեանց և խորհրդածութեանց մէջ, այլ և Աղուանից երկրի իշխանների անուանց դասաւորութեան մէջ։ Հմուտ պատմաբանն, Աղուանից պատմութիւններից քաղելով՝ մասնաւոր է անում որ Աղուանից երկիրն նախ կառավարուած է թագաւորներով, ապա նախարարներով, կըրկին թագաւորներով, ապա իշխաններով և հուսկ յետոյ մելիքներով։ Առանձին առանձին գլուխներում, հիանալի դասաւորութեամբ, նկարագրած է թագաւորաց ծագումն, ծննդաբանութիւնը և յաջորդութիւնը առանձին, նախարարաց՝ առանձին, իշխանաց՝ առանձին և մելիքներինն՝ առանձին։ Սակայն հարկ է ասել որ սոցանից ոմանց գործերը հատառօտիւ նկարագրած է, իսկ ոմանցն լռութեամբ անցած է։

